

# Եթե ներդրումներ արվեն, աշխատատեղեր ստեղծվեն, բոլորն էլ կմնան իրենց ծննդավայրում. Կոտայքի մարզպետ

## Հեղինակ՝ Հասմիկ Հակոբյան

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը վստահեցնում է՝ ամեն ինչ անելու է, որպեսզի բարելավվի մարզի բնակիչների կյանքի որակը:

[Panorama.am](http://Panorama.am)-ի թղթակցի հետ զրույցում մարզպետը նշեց, որ մարզում խնդիրները բազմաթիվ են և բազմաշերտ, և միայն հետևողական և արդյունավետ աշխատանքի շնորհիվ կունենան ցանկալի արդյունք: Իսկ դրա համար, ըստ նրա, առաջին հերթին անհրաժեշտ են բանիմաց, նվիրյալ մարդիկ:

Ռոմանոս Պետրոսյանի խոսքով՝ մարզպետարանում մեծ կրճատումներ չեն եղել, ավելի շատ քաղաքական և հայեցողական պաշտոններ են փոխվել: Նա միաժամանակ նշեց՝ այն մասնագետները, որոնք իրենց աշխատանքում թերացել են, բնականաբար, նրանց պետք է փոխարինեն ավելի պրոֆեսիոնալները:

«Կյանքի այն որակը, որ ունենք Կոտայքի մարզում, դա իրենց աշխատանքի արդյունավետության գնահատականն է, իսկ այս դեպքում՝ անարդյունավետության: Այսօր կան խնդիրներ՝ սոցիալական, վարչարարական, որ մեկ-երկու զանգերի, հարցումների շնորհիվ լուծվում են: Դրանց թիվն արդեն մի քանի տասնյակից անցել են: Քաղաքացիները ընդունելությունների ժամանակ այնպիսի հարցեր են բարձրացնում, որ դրանք կապված են մեկ-երկու մարզային չինովնիկի այսրոպեական որոշումից, բայց երկար ժամանակ դրանք չեն լուծվել: Մարդկանց չեն լսել, մարդկանց անտեսել են: Սոցիալական ոլորտում կան խնդիրներ, որոնք թյուրիմացության արդյունք են, և մարդիկ տարիներով բախել են չինովնիկների դռները, բայց այդ դռները չեն բացվել», - ասաց Ռոմանոս Պետրոսյանը: Մարզպետը նաև նշեց, որ եղել են դեպքեր, երբ անձնավորված, ինչ-ինչ շահերից ելնելով՝ որոշումներ են կայացրել, որոնց արդյունքում տուժել է մի ամբողջ համայնք:

«Հիմա այդ ամենի մեջ անձամբ մտնում եմ, վիրահատական մեթոդներով լուծումներ եմ առաջարկում», - հավելեց նա:

Անդրադառնալով գյուղատնտեսության ոլորտի խնդիրներին՝ Ռոմանոս Պետրոսյանն ասաց, որ թեև մարզում կան ջրդի հողեր, սակայն գյուղացիները դրանք չեն մշակում՝ մտածելով, որ այն եկամտաբեր չէ, բերքը չեն կարող իրացնել:

«Ունենք լավ այգեգործական տնտեսություններ, կաթիլային համակարգերով հագեցած ազնվամորու, ելակի ջերմոցներ: Կոտայքի մարզը բացի տուրիզմից, ունի գյուղատնտեսության, սննդի վերամշակման ոլորտում լուրջ ռեսուրսներ, որոնք

կարող էին աշխատատեղեր ստեղծել, բարձրացնել եկամուտը՝ դրանով իսկ բարձրացնելով պետբյուջե վճարվող հարկերը: Անպայման պետք է այդ պոտենցիալն օգտագործել»,- նշեց մարզպետը:

Անդրադառնալով ներդրումների ներգրավման ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ Ռոմանոս Պետրոսյանն ասաց, որ փոխմարզպետներից մեկը կոնկրետ զբաղվում է բիզնես միջավայրի առողջացման, ներդրումների ներգրավման ծրագրերով: Ըստ նրա՝ օրական 3-4 հանդիպում տեղի է ունենում պոտենցիալ ներդրողների հետ.«Մեր կարևոր խնդիրը աշխատատեղերն են: Եթե ներդրումներ արվեն, աշխատատեղեր ստեղծվեն, բնականաբար, ոչ մեկ իր տանից չի գնա, բոլորն էլ կմնան իրենց ծննդավայրում»:

Մարզպետը հայտնեց նաև, որ աշխատանքներ են տարվում Չարենցավանում «Թումո» կենտրոն հիմնելու ուղղությամբ:

<https://www.panorama.am/am/news/2018/07/03/%D5%8C%D5%B8%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B8%D5%BD-%D5%8A%D5%A5%D5%BF%D6%80%D5%B8%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/1973529?fbclid=IwAR2WihRG1vQIk0-1rdICu5JazDLoq6amkjGh-DGQE7UthOCCXrfsBax2GCY>

Աղբյուր՝ Panorama.am